

Հ Ա Ն Գ Ի Ս Տ

Տ. ԵՓՐԵՄ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏՈՂՄՈՒՆԻԻ

Դժուար կ'արժանագրենք վախճանումը Կիլիկիոյ Աթոռի բազմաշխատ, մխարաններէն եւ Դամասկոսի Կաթողիկոսական Փոխանորդ Դերաշնորհ Տ. Եփրեմ Արքեպիսկոպոս Տոմուկիի (Ասրիւանի) որ ի Տէր հանգեաւ Դամասկոսի մէջ արտի կաթուածէ, Նոյեմբեր ամսոյ 27-ին:

Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Վեհի կարգադրութեամբ, Լիբանանի Կաթ. Փոխանորդ Գրգը. Յ. Խաթ Արքեպիսկոպոս Աջապահեան, ընկերակցութեամբ վարդապետ հայրերու, սարկաւազներու եւ ազգայիններու, կը մեկնի Դամասկոս իր հոգեւոր եղբոր հանգուցեալ Սրբազանի թաղման արարողութիւնը կատարելու: Հանգուցեալին մարմինը կ'ամփոփուի Դամասկոսի Հայոց Եկեղեցւոյ քակին մէջ:

Հանգուցեալ Տ. Եփրեմ Արքեպիսկոպոս ծնած է Սիւս 1680-ին: Նախակրթութիւնը ստացած տեղւոյն ազգային վարժարանին մէջ, եւ ապա 1906-ին մտած Ժառանգաւորաց վարժարան, որուն ընթացքը աւարտելէ ետք ձեռնադրուած քաղկաւազ Բէքմէզ-ճեան Կիրակոս Եպիսկոպոսէն: 1909-ին, Սահակ Կաթողիկոսի ձեռամբ կը ձեռնադրուի վարդապետ, աւագանի Կարապետ անուան տեղ վերակոչուելով Եփրեմ:

1930-ին կը ձեռնադրուի Եպիսկոպոս Սահակ Կաթողիկոսէն եւ ապա 1937-ին կը ստանայ արքութեան տիտղոսը:

Եփրեմ Սրբազան վարած է ուսուցչական պաշտօն Սոյ Ժառանգաւորացի եւ Ազգային վարժարաններու մէջ: Հովուական պաշտօններ վարած է Յունաստան, Լիբանան եւ Սուրիա: Դամասկոսի Կաթողիկոսական Փոխանորդ անուանուած է 1933-ին եւ այդ դժուարին պաշտօնը ձեռնհասութեամբ, նախանձախնդրութեամբ եւ սիրով վարած մինչեւ վերջ: Հայ Եկեղեցին իր մահով կը կորսնցնէ աշխատասէր, իր ժողովուրդին սիրովը լի, խանդավառ եւ փորձառու եկեղեցական մը եւ հոգիւ մը:

Կը փոխանցենք Ս. Աթոռոյս Միաբանութեան եւ անոր Գահակալին ցաւակցութիւնները Կիլիկիոյ Աթոռին եւ, անոր Վեհափառ Հայրապետին Տ. Տ. Գարեգին Յովսէփեան Կաթողիկոսին, մաղթելով երկար կեանք եւ արեւատուրիւն Վեհին ու պայծառութիւն իր Աթոռին: